ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» ---------- 2017թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի հ. 648-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.105՝ 68.6 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման հ.11112015-01-0031 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Կարեն Բաղդասարյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականությունը համարվող Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.105՝ 68.6 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) գնդապետ Կարեն Բաղդասարյանին:

Քննարկվող բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման հ.11112015-01-0031 վկայականի, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Կարեն Բաղդասարյանը հանդիսանում է Արցախյան պատերազմի ակտիվ մասնակից: Նա 1989 թվականից մինչև 1994 թվականը, սկզբնական շրջանում կամավորական ջոկատի, այնուհետև՝ Արցախի պաշտպանության բանակի տարբեր զորամասերի կազմում, մասնակցել է ԼՂՀ սահմաններում ընթացող մարտական գործողություններին, որոնց ընթացքում 2 անգամ վիրավորվել է: ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի և ինքնապաշտպանության ուժերի հրամանատարության որոշումներով հակառակորդի տարածքում իրականացրել է հատուկ գործողություններ: Հանդիսանում է 2-րդ խմբի հաշմանդամ:

Գնդապետ Կարեն Բաղդասարյանը պարգևատրվել է ՀՀ նախագահի «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի և մարտական ծառայության մեդալներով, ՀՀ պաշտպանության նախարարության «Անբասիր ծառայության համար» 1-ին աստիճանի մեդալով և ռազմական հետախուզության «ծառայության համար» կրծքանշանով:

Կարեն Բաղդասարյանը հինգ անձով՝ ինքը, մայրը, կինը աղջիկը և տղան համատեղ բնակվում են Սարյան փողոցի հ.40 շենքի հ.36 հասցեում ազգականին պատկանող բնակարանում: Բաղդասարյանների ընտանիքը Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում դեռևս 2011 թվականից վերցվել է բնակարանային հաշվառման:

Համաձայն ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրած տեղեկանքի՝ վերջինիս անվամբ Հայաստանի Հանրապետության տարածքում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և վերջին 5 տարվա ընթացքում ՀՀ տարածքում վերջինիս կողմից կնքված անշարժ գույքի ձեռքբերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Հաշվի առնելով նրա մարտական ուղին, ինչպես նաև բնակարանային պայմանների բարելավման անհրաժեշտությունը մշակվել է ավագանու սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ